# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Կապուտան 1-ին փողոց թիվ 26, հեռ. (098) 42-88-38, (077) 06-32-01. kaputangyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբեր 2017 թվականի N 39

*ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՆԻԿ ՆԱՀԱՊԵՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912–Ն որոշմամբ հաստատված կարգի 2–րդ բաժնի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ,13-րդ և 22.1 կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջներով. ***որոշում եմ***՝

1.Կապուտան համայնքի 9-րդ փողոց թիվ 5 հասցեում գտնվող քաղաքացի Վանիկ Նահապետի Հակոբյանի ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող՝ 07-036-026-004 կադաստրային ծածկագրի հողամասում իրենց կողմից ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը 47,77քմ , ծածկ 21,38քմ, և 2,34քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:

2. Պարտավորեցնել քաղաքացի Վանիկ Նահապետի Հակոբյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունների համար համայնքի բյուջեի N 900105217211 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" N 912–Ն որոշման 13-րդ կետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ ծածկի մեկ քառակուսի մետրի համար 414 (չորս հարյուր տասնչորս) ՀՀ դրամ: Հաշվի առնել այն, որ 47,77քմ մակերեսով օժանդակ շինությունը և 2,34քմ մակերեսով պարիսպը ինքնակամ կառուցվել է մինչև 2001թվականի մայիսի 15-ը, որի օրինականացման համար վճար չի գանձվում: Ծածկի ընդհանուր մակերեսը 21,38քմ է, որոնց օրինականացման արժեքը կազմում է 8852 (ութ հազար ութ հարյուր հիսուն երկու) ՀՀ դրամ:

3.Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:Շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներովև չի առաջացնումհարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կապուտան, (098) 42-88-38, (077) 67-08-01, kaputan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017Թ. N 40

### ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Վանիկ Նահապետի Հակոբյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել վերականգնել սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզ գյուղ Կապուտան 9-րդ փողոց թիվ 5 հասցեում գտնվող բնակելի շինության սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքի հիմքերը:

Կատարված ուսումնասիրությունից պարզվել է,որ Աբովյանի շրջանի ժողդատարանի 1978 թվականի հունվարի 25-ին կայացած վճռի համաձայն՝ քաղաքացի Վ.Հակոբյանին ճանաչել են Կապուտան գյուղի 9-րդ փողոց թիվ 5 հասցեի շինության սեփականատեր:

Բնակելի շինության փաստացի օգտագործման տարածքը կազմում է 0,03409հա, որը արտացոլված է համայնքի կադաստրային քարտեզում:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետի. ***որոշում եմ,***

1. Կապուտան գյուղի 9-րդ փողոց թիվ 5 հասցեում գտնվող բնակելի նշանակության շինության սպասարկման համար փաստացի օգտագործվող 0,03409հա մակերեսով հողատարածքի օգտագործման հիմքերը համարել վերականգնված:
2. Քանի որ հողատարածքը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում,ապա այն հատկացնել սեփականության իրավունքով:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղար Ա.Մուրադյանի վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

20 17 թ. Սեպտեմբեր 13